ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԸՀԱՇՁԲ-16/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2016 թվականի նոյեմբերի 15-ին կնքված N ԲԸՀԱՇՁԲ-16/6 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	N 1 Կատարողի՝ <<Կանժիլստրոյ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացրած գրությունը կանխավճար տրամադրելու վերաբերյալ և պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը:
Փոփոխության նկարագրություն	1.1 Պայմանագրի 14.02.2018թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետում ավելացվել է նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ. <<1.1.1 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 60 000 000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամի չափով՝ կանխավճարի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելուց հետո Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:
Փոփոխության հիմնավորում	N ԲԸՀԱՇՁԲ-16/6 պայմանագրի 5.1.2 և 8.4 կետերի պայմանները:

Պատվիրատու՝ ***ՀՀ քաղաքաշինության կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
15.11.2016թ. կնքված N ԲԸՀԱՇՁԲ-16/6 գնման պայմանագրի

ք. Երևան 30.10.2018 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա մի կողմից, և <<Կանժիլստրոյ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գեղամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 15.11.2016թ կնքված N ԲԸՀԱՇՁԲ-16/6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 5.1.2 և 8.4 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 14.02.2018թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1.1 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 60 000 000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամի չափով՝ կանխավճարի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելուց հետո Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի	**<<Կանժիլստրոյ>> ՍՊԸ**
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ Կոտայքի մարզ,
կառավարական տուն 3	ք. Եղվարդ, Երևանյան 3/16
ՀՀ ֆինանսների նախարարության	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՀ 11500419714700
ՀՀ 900011012607	ՀՎՀՀ 03308709
ՀՎՀՀ 02565827	

Գլխավոր քարտուղար՝ Տնօրեն

_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.

_____ Ա. Գեղամյան (ստորագրություն) Կ.Տ.